ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 31 - 32 (16120) ՇԱԲԱԹ, 27 ԱՊՐԻԼԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԵՐԿՐՈՒՄ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀԻՐԱՎԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»

Ապրիլի 22-ին Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին ելույթ ունեցավ Եվրոպայի խորհրդարանի խորհրդարանական ասամբլեայում: Վարչապետի ելույթի առաջին մասը նվիրված էր Վրաստանի կառավարության գործունեության հիմնական ուղղությունների պարզաբանմանը: Վարչապետը խոսեց երկրի առջեւ ծառացած հիմնախնդիրների, իրականացվող բարեփոխումների, Վրաստանի Եվրատլանտյան կուրսի անխախտելիության, ժողովրդավարության զարգացման հեռանկարների մասին:

Վարչապետի ելույթից հետո ԵԽԽՎ-ի նիստն ընթացավ հարցու-պատասխանի ռեժիմով, որի ընթացքում Բիձինա Իվանիշվիլին պատասխանեց Եվրախորհրդարանի պատգամավորների, տարբեր բնագավառներին ու ոլորտներին վերաբերող, առանձին դեպքերում էլ ոչ կոռեկտ հարցերին:

Վրաստանի վարչապետը եվրոպական նշանակալի կառույցի առաջ իր անդրանիկ ելույթը սկսեց ֆրանսերեն լեզվով: «Վարչապետի կարգավիճակում սա իմ առաջին ելույթն է եվրոպական կառույցում: Եվ պատահական չէ, որ ես դիմում եմ ԵԽ-ին, քանզի դուք հզոր

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 98

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 24-ին նշվեց Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցը: Այդ օրը, ավանդույթի համաձայն, Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեց 1915 թ. Օսմանյան Թուրքիայի իրականացրած ոճիրի՝ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:

Անմար կրակի մոտ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ հոգեհանգստյան պաշտոն կատարեց հոգեւոր դասը, պաշտոնատար անձինք գլուխ խոնարհեցին եւ մեկ րոպե լռությամբ հարգեցին սպանված 1,5 միլիոն հայերի հիշատակը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՄՆ-ՈՒՄ

Ապրիլի 26-ին աշխատանքային այցով ԱՄՆ-ում գտնվող Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին Դալլաս քաղաքում մասնակցեց Ջորջ Բուշի նախագահական կենտրոնի բացման արարողությանը:

Հանդիսավոր արարողությանը ժամանել էին ԱՄՆ-ի «նախագահական ակումբի» ներկայում ողջ անդամները՝ Սպիտակ տան ներկայիս տերը՝ Բարաք Օբաման, նախկին նախագահներ Ջորջ Բուշ Ավագը, Բիլ Քլինթոնը եւ Ջիմի Քարտերը: Վերջին անգամ նրանք միասին հավաքվել էին 2009 թվականի հունվարին՝ Օբամայի երդման արարողությունից մի քանի օր առաջ:

Բուշ կրտսերին շնորհավորելու էին եկել նաեւ նրա վարչակազմի շատ անդամներ, ինչպես նաեւ տարբեր պետությունների նախկին ղեկավարներ. մասնավորապես, Մեծ Բրիտանիայի, Իսրայելի եւ Իտալիայի նախկին վարչապետեր Թոնի Բլերը, Էհուդ Օլմերտը եւ Սիլվիո Բեռլուսկոնին:

Դալլասում Ջորջ Բուշի նախագահական կենտրոնի շնորհանդեսի ընթացքում կայացավ Վրաստանի նախագահի հանդիպումը ՆԱՏՕ-ի գլխավոր քար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 98-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Ի նշանավորումն Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցի, վիրահայ համայնքն անցկացրեց մի շարք միջոցառումներ:

Ապրիլի 24-ի առավոտյան վիրահայ համայնքի բազմամարդ թափորը Թբիլիսիի Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցուց շարժվեց դեպի Խոջիվանքի Հայ գրողների եւ հասարակական գործիչների պանթեոն: Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին իրենց խոնարհումն էին բերել Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրթյանը, Վրաստանի խորհրդարանի մարդու իրավունքների կոմիտեի առաջին փոխնախագահ Գեղեւան Փոփխաձեն, նույն կոմիտեի նախագահի

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԵԽԽՎ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱՆԿԵՂԾ ԵՎ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ

ԵԽԽ ասամբլեային մասնակից Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին Ստրասբուրգում անցկացրեց մի շարք հանդիպումներ:

Ապրիլի 22-ին նա հանդիպեց ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ժան-Կլոդ Մինյոնի հետ: Կողմերը քննարկեցին Վրաստանի ստանձնած պարտավորությունները:

«Հանդիպումից հետո վարչապետը հայտարարեց. «Ես ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի նախագահին համոզեցի, որ նոր կառավարությունն արագացված կերպով անպայման կկատարի ստանձնած պարտավորությունները: Մենք խոսեցինք մեր մեծ հարեւան Ռուսաստանի հետ ունեցած հիմնախնդիրների մասին: Պլանավորեցինք այդ հարաբերությունների կարգավորման հնարավորությունները, նաեւ Եվրամիության հետ մեր համագործակցությանն առնչված այլ հարցեր»:

«Մեզ համար մեծ պատիվ էր

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Բ.ՕԲԱՄԱ. «ՄԵՆՔ ՀԻՇԱՏԱԿՈՒՄ ԵՆՔ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ՀԱՐԳՈՒՄ ՆՐԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԸ»

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցի կապակցությամբ ուղերձ է հղել: Օբաման կրկին օգտագործել է Մեծ Եղեռն ձեւակերպումը՝ խուսափելով Ցեղասպանություն եզրից: «Այսօր մենք հիշատակում ենք Մեծ Եղեռնը եւ հարգում նրանց հիշատակը, ովքեր նահատակվել են 20-րդ դարի ամենասարսափելի վայրագությունների ժամանակ: Իննսունութ տարի առաջ 1,5 միլիոն

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ

Վրաստանի բարձրագույն օրենսդիր մարմինը երրորդ ընթերցմամբ ընդունեց բանտարկության մասին օրենսգրքում կատարվելիք ուղղումները:

Ուղղումների համաձայն, միեւնույն հանցագործության մեջ մեղադրվող անձինք պետք է տեղադրվեն տարբեր բանտախցիկներում: Վարչությունը պարտավոր է ապահովել տվյալ անձանց մեկուսացումը միմյանցից:

Այս նորմը կարող է տարածվել նաեւ այլ ամբաստանյալների վրա՝ քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմանը:

Խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ ընդունել է «Սահմանադրական դատարանի մասին»

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՌԱՆՑ ՎԵՂԱՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ

Յուրաքանչյուր տարի, ապրիլի 24-ին, համայն աշխարհի հայերը նշում են իրենց պատմության վշտալի տարելիցը՝ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Վիկտորյա Մաքսուեայի հարցազրույցը դեսպան Հովհաննես Մանուկյանի հետ:

- Պարոն դեսպան, այսօր 98-րդ տարելիցն է այն արյունոտ իրադարձությունների, որ պատմության մեջ մտել են Մեծ Եղեռն անվամբ:

- Հայոց Եղեռնը Օսմանյան

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵԽԽՎ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱՆԿԵՂԾ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

առաջին անգամ ընդունել Վրաստանի վարչապետին: Կայացավ մեր հանդիպումը, եւ մենք անկեղծորեն ու կառուցողական բնույթով խոսեցինք Վրաստանի այսօրվա իրավիճակի եւ գալիք պլանների մասին»,- հայտարարեց Մինյոնը՝ Բիձինա Իվանիշվիլու հետ հանդիպումից հետո: Հանդիպմանը մասնակցեցին նաեւ արտգործնախարար Մայա Փանջիկիձեն, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, խորհրդարանի արտաքին կապերի կոմիտեի նախագահ Թեդո Ջափարիձեն, «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության գործադիր քարտուղար Արմազ Ախվլեդիանին, ԵԽ-ում Վրաստանի մշտական ներկայացուցչի պաշտոնակատար Իրակլի Գիվիաշվիլին:

Ստրասբուրգում Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի գլխավոր քարտուղար Վոյցեկ Սավիցկու հետ:

Բիձինա Իվանիշվիլին գլխավոր քարտուղարին ծանոթացրեց Վրաստանում իրականացվող բարեփոխումներին: Քննարկվեց նաեւ վրացռուսական հարաբերությունների կարգավորման հարցը:

Եվրոպայի պալատում կայացած հանդիպմանը մասնակցեցին նաեւ վրացական պատվիրակության անդամները:

Ստրասբուրգում վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հանդիպեց ԵԽ մարդու իրավունքների եվրահանձնակատար Նիլս Մուժնիեկսի հետ: Վարչապետը եվրահանձնակատարին շնորհակալություն հայտնեց ակտիվ համագործակցության եւ այն սկզբունքային դիրքորոշման համար, որ նա դրսեւորեց Վրաստանում բանտարկյալների նկատմամբ անվայել վերաբերմունքի բացահայտված փաստերի նկատմամբ: Կողմերը նաեւ քննարկեցին Վրաստանի օկուպացված տարածքներում մարդու իրավունքների պահպանման վերաբերյալ անաչառ տեղեկատվություն պատրաստելու հարցը:

Ստրասբուրգում Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Տորբեն Յագլանդը եւ Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին քննարկել են Վրաստանի օկուպացված տարածքների իրավիճակը:

Սկզբում Իվանիշվիլին եւ վրացական պատգամավորության անդամները գլխավոր քարտուղարի հետ հանդիպեցին ընդլայնված կազմով: Դրանից հետո կայացավ Իվանիշվիլու եւ Յագլանդի մենահանդիպումը:

Կողմերը քննարկեցին նաեւ Եվրախորհրդի եւ Վրաստանի համագործակցության հարցերը, արտահայտվեցին հօգուտ այդ հարաբերությունների խորացման:

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՄՆ-ՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տուղար Անդրես Ֆոգ Ռասմուսենի հետ:Հանդիպմանը քննարկվել են դաշինքին Վրաստանի անդամագրման հեռանկարները:

Համատեղ ընթրիքի ընթացքում Ռասմուսենը վերստին Սաակաշվիլուն հավաստիացրել է ՆԱՏՕ-ին ինտեգրացվելու ճանապարհին Վրաստանին աջակցելու հարցում: Կողմերը քննարկել են նաեւ Վրաստանի իրադրությունը:

ԱՄՆ-ում գտնվող Վրաստանի նախագահը՝ այցի շրջանակներում մասնակցելու է եւս մի շարք միջոցառումների, կանցկացնի բարձր մակարդակի հանդիպումներ:

Մասնավորապես, նա կմասնակցի համաժողովին, որը Արիզոնայի նահանգում կանցկացվի սենատոր Ջոն Մակքեյնի նախաձեռնությամբ:

Բացի այդ, ծրագրված են Սաակաշվիլու հանդիպումները ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերիի, ինչպես նաեւ երկրի փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի հետ:

ԱԿՑԻԱ

«ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ» ՀԱՆՐԱՀԱՎԱՔԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Ապրիլի 19-ին Թբիլիսիում, Ռուսթավելու պողոտայում անցկացվեց «Միասնական ազգային շարժման» կողմից կազմակերպված հանրահավաքը:

Ներկա իրավիճակում քաղաքական ընդդիմության վերածված «Միասնական ազգային շարժումը» ապրիլի 19-ին անցկացված հանրահավաքի գլխավոր միտումը հայտարարեց անվստահությունը Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին անդամակցվելու հարցում նոր կառավարության դիրքորոշման նկատմամբ: Չնայած արտաքին քաղաքական կուրսի անշրջելիության մասին Վրաստանի խորհրդարանի որոշմանը, «Ազգային շարժումը» անցկացրեց հանրահավաքը, որն ավելի շուտ կոչված էր ցուցադրելու ներկայումս քաղաքական ընդդիմության շարքերում գտնվող կուսակցության ուժն ու հանրաճանաչությունը:

Դեռեւս փետրվարից «Ազգայիններ» կողմից լայնորեն քարոզվող միջոցառման, Ռուսթավելու պողոտայում նրանց կողմից սպասող 100 հազարի փոխարեն, տարբեր գնահատումներով հավաքվել էր ընդամենը 10-15 հազար մարդ:

Հանրահավաքի ամենանշանակալի երեւույթը՝ հասարակությանը «Նորացված Ազգային շարժման» ցուցադրումն էր: Հանրապավաքին, որին մասնակցեցին եւ ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, խորհրդարանի նախկին խոսնակ, ներկայումս խորհրդարանական փոքրամասնության ղեկավար Դավիթ Բաքրաձեն, նախկին վարչապետ, ներկայումս «Միասնական ազգային շարժման» գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլին, Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավան եւ ուրիշներ, առանձնակի ընդգծեցին իրենց անհաշտելի դիրքորոշումը ներկայիս իշխանության կողմից իրականացվող գործողությունների նկատմամբ:

Շուրջ երեք ժամ տեւած հանրահավաքն անցավ առանց միջադեպերի:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

օրենքում կատարվելիք ուղղումները: Նախագիծը նախաձեռնել է օրենսդիր մարմնի իրավաբանական կոմիտեի նախագահ Վախթանգ Խմալաձեն:

Նախագծի համապատասխան, այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանը կարճի վիճելի ակտը կամ նրա համապատասխան մասը՝ մինչեւ վերջնական որոշում կայացնելը, ապա վերջնական որոշումը պետք է ընդունվի վիճելի ակտի կամ նրա համապատասխան մասի ընդհատման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում, դատարանի որոշումը կորցնում է ուժը:

Դրա հետ մեկտեղ, օրենքում ամրագրվել է «առանձին դեպք» արտահայտությունը. Սահմանադրական դատարանի նախագահին իրավունք է տրվում առանձին դեպքերում՝ գործը քննող դատարանի հիմնավորված դիմումի հիման վրա, վերոնշյալ ժամկետը շարունակել ոչ ավելի քան 15 օրացուցային օր:

Խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունել է աշխատանքային օրենսգրքում կատարվելիք ուղղումները:

Փոխխոսնակ Մանանա Կոբախիձեի խոսքերով՝ ըստ ուղղումների, գործատուն այլեւս չի կարող առանց որեւէ պատճառի հեռացնել աշխատողին:

«2006 թվականից, ինչ գործում է տվյալ աշխատանքային օրենսգիրքը, եղել են հարյուրավոր եւ հազարավոր դեպքեր, երբ աշխատանքից հեռացրել են առանց որեւիցե պարզաբանման: Ուղղումներն ընդունելուց հետո կվերանայվեն աշխատանքային համաձայնագրերը, եւ մարդիկ այլեւս երկյուղ չեն կրի, որ նրանց համար չի երկարացվի մեկ ամսվա պայմանագիրը: Այն էլ ասենք, որ ինքը՝ գործատուն նույնպես չպետք է վախենա, որ չի կարողանա փոխել կադրերը»,- ասել է Կոբախիձեն:

ՆԱԽԱԳԱՀԻ ՎԵՏՈՆ՝ ԵՐԿՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին վետո դրեց Վրաստանի խորհրդարանի ընդունած երկու օրինագծերի վրա: Այս մասին հատուկ ասուլիսում հաղորդել է նախագահի վարչակազմի նոր ղեկավար Անդրո Բառնովը:

Դրանցից մեկը «Ընդհանուր դատարանների մասին» օրենքն է, որտեղ, նախագահի կարծիքով, հաշվի չեն առնվել Արդարադատության խորհրդի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի դիտողությունները: Նոր օրինագծով նախատեսվում է Արդարադատության խորհրդի անդամների լիազորությունների անհապաղ ընդհատում, ինչն ընդունելի չէ նախագահի համար:

Երկրորդը վերաբերում է «Ատենակալների մասին օրենքին»: Այնտեղ խորհրդարանը կատարել է փոփոխություններ, ըստ որոնց ատենակալների դատարանի ընտրության իրավունքը հանձնվում է դատախազին: Նախագահը համարում է, որ ատենակալների դատարանի ընտրության իրավունքը պետք է մնա ամբաստանյալներին:

Հարկ է նշել, որ արդեն մեկ անգամ խորհրդարանին հաջողվել է հաղթահարել նախագահի վետոն, եւ այս անգամ էլ այդպիսի հույս են տածում մեծամասնության ներկայացուցիչները:



ԵՎՐԱԳՈՏԻ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ՀԱՍԵԼ Է ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ

Եվրագոտու 17 երկրների պետական պարտքը 2012 թվականին կազմել է ՀՆԱ-ի ռեկորդային 90,6 տոկոսը՝ 2011 թվականի 87,3 տոկոսի եւ 2010 թվականի 85,4 տոկոսի համեմատությամբ:

Դրա հետ մեկտեղ եվրագոտու պետբյուջեի հանրագումարային դեֆիցիտը ՀՆԱ-ի 4,2 տոկոսից նվազել է մինչեւ 3,7 տոկոս:

Եվրամիության անդամ բոլոր 27 պետությունների պետական պարտքը ՀՆԱ-ի 82,5 տոկոսից աճել է մինչեւ 85,3 տոկոս, բյուջետային դեֆիցիտը՝ ՀՆԱ-ի 4,4 տոկոսից նվազել է մինչեւ 4 տոկոս:

2012 թվականի արդյունքներով՝ եվրագոտու ՀՆԱ-ի միագումար ծավալը շուկայական գներով կազմել է 9,49 տրլն եվրո, Եվրամիությանը՝ 12,9 տրլն եվրո:

ԻՏԱԼԻԱ

ՋՈՐՋԻՈ ՆԱՊՈԼԻՏԱՆՈՆ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՀ

Ապրիլի 20-ին Ջորջիո Նապոլիտանոն համաձայնել է իր թեկնածությունն առաջադրել Իտալիայի նախագահի պաշտոնում եւ այդ նույն օրն էլ վերընտրվել է այդ պաշտոնում՝ քվեարկության վեցերորդ փուլի ընթացքում: Իտալիայի նախագահ վերընտրված Ջորջիո Նապոլիտանոն ապրիլի 22-ին երդվել է սահմանադրության վրա: Երդմնակալության պաշտոնական արարողությունն անցկացվել է Իտալիայի խորհրդարանի ընդլայնված նիստին:

Ջորջիո Նապոլիտանոն 87 տարեկան է: Առաջին անգամ Նապոլիտանոն Իտալիայի նախագահ է ընտրվել 2006-ի մայիսին:

ՍԻՐԻԱ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՆ ԱՄՈՒՐ ԵՆ

Սիրիայի նախագահ Բաշար Ասադն ապրիլի 21-ին Դամասկոսում ընդունել է Լիբանանի տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված պատվիրակությանը: Ասադը երկրում ծավալվող իրադարձությունների վերաբերյալ նշել է, որ Սիրիայի իշխանությունների դիրքերն ամուր են:

Ասադն անդրադարձել է նաեւ սիրիահայությանը, որը քաղաքացիական պատերազմի ժամանակ եւ այսօր էլ չեն հեռանում սիրիական հայրենիքից: Դրվատանքով խոսելով հայերի մասին՝ Ասադը նշել է, որ, չնայած հայերն իսլամ չեն ընդունել, կարողացել են ինտեգրվել արաբական միջավայրին եւ դրական մեծ ներդրում ունենալ թե՛ Սիրիայի, թե՛ Լիբանանի կյանքում:

ԱՄՆ

ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԲՈՍՏՈՆՅԱՆ ԱՀԱԲԵԿԻՉԻՆ

Ջոհար Ցարնաեւը, որը մեղադրվում է Բոստոնում ահաբեկչական գործողություն իրականացնելու մեջ, հիվանդանոցից տեղափոխվել է Մասաչուսեթսի նահանգի Դեւենս:

Ջոհարը գտնվում է այն կալանավորների համար նախատեսված կենտրոնում, որոնց բժշկական խնամք է պահանջվում: Նրա առողջական վիճակի մասին չի հաղորդվում:

Ինչպես արդեն տեղեկացվել է, Բոստոնի համերկրային դատարանը մտադիր է մայիսի 30-ին առաջին լսումներն անցկացնել Բոստոնյան միջազգային մարաթոնի ընթացքում կատարված ահաբեկչական գործողության գործով:

Ըստ մեղադրող կողմի տվյալների՝ ահաբեկչական գործողությանը Ցարնաեւի մասնակցությունը հաստատվում է հանցանշաններով: Բոստոնում կատարված ահաբեկչական գործողությունը երեք մարդու կյանք է խլել, տուժել է 180 հոգի: Ենթադրվող ահաբեկիչներից մեկը՝ Թամերլան Ցարնաեւը, զոհվել է ոստիկանների հետ փոխհրաձգության ընթացքում:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ՄԱՅԱ ՓԱՆՋԻԿԻՁԵՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՄԻՆԻՍՏԵՐԻԱԼԻՆ

Վրաստանի արտգործնախարար Մայա Փանջիկիձեն Բրյուսելում մասնակցեց ՆԱՏՕ-ի մինիստերիալին:

Դրա շրջանակներում նա մասնակցեց ISAF երկրների հանդիպմանը, ինչպես նաեւ ունեցավ երկկողմ հանդիպումներ: Մասնավորապես, Փանջիկիձեն հանդիպեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի՝ Կենտրոնական Ասիայի եւ Հարավային Կովկասի երկրների գծով հատուկ ներկայացուցիչ Զեյմս Ապաթուրայի հետ: Կողմերը քննարկեցին Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի հարաբերությունները, Վրաստանի մասնակցությունը Աֆղանստանում իրականացվող առաքելությանը:

Մայա Փանջիկիձեն հայտարարել է, որ Վրաստանը Աֆղանստանում խաղաղարար գործողությանը կմասնակցի նաեւ 2014 թվականից հետո:

«Երբ մենք Վրաստանի արտգործնախարարի հետ Աֆղանստանի թեմային զուգահեռ քննարկում էինք գործընկերության հարցերը, ես ողջունեցի Վրաստանի վարչապետի ելույթը Ստրասբուրգում: Մենք պաշտպանում ենք Վրաստանի ձգտումը դեպի ՆԱՏՕ, գիտենք եւ ողջունում ենք, որ դա բազմակուսակցական համաձայնություն է... Մենք մեծապես դրականորեն ենք գնահատում պաշտպանական ոլորտում այժմ անցկացվող բարեփոխումները... Մեզ համար անկյունաքար է այն, որ հունիսին Վրաստան կժամանի Հյուսիսատլանտյան խորհուրդը եւ այժմ այդ նպատակով իրականացնում ենք նախապատրաստական աշխատանքներ»,- հայտարարել է Զեյմս Ապաթուրայը:

Վրաստանի արտգործնախարար Մայա Փանջիկիձեն Բրյուսելում հանդիպում ունեցավ նաեւ ԱՄՆ պետքարտուղար Քերիի հետ, իր գերմանացի գործընկեր Գիդո Վեստերվելեի, Կանադայի արտգործնախարար Ջոն Բերդի, Միացյալ Արաբական էմիրությունների արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Անվար Հարգաշի հետ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԻՄՈՒՆԱՑՄԱՆ ՇԱԲԱԹԸ

Ապրիլի 22-27-ն անցկացվում է իմունացման եվրոպական շաբաթ:

Ինչպես հաղորդել են Վրաստանում Հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնից, իմունացման շաբաթն անցկացվում է յուրաքանչյուր տարի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական բյուրոյի նախաձեռնությամբ: Իմունացման շաբաթի նպատակն է բարելավել պատվաստումների (վակցինացիա) ցուցանիշերը եվրոպական տարածաշրջանում եւ բարձրացնել իմունացման կարեւորության մասին բնակչության իրազեկման մակարդակը:

«Իմունացիան պետք է կարեւոր եւ առաջնային լինի հասարակության եւ պետության համար. վերջին ժամանակներս նկատվող կարմրուկ հիվանդության բռնկումների պայմաններում, անհրաժեշտ է պաշտպանել բնակչության եւ, մասնավորապես, երեխաների առողջությունը՝ պատվաստման գործընթացի ուժեղացման միջոցով: Այսպիսին էր Վրաստանում իմունացման շաբաթի գլխավոր նպատակը»,- ասվում է Հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի տարածած տեղեկատվության մեջ:

Շաբաթվա ընթացքում, եվրոպական տարածաշրջանի 53 երկրներում անցկացվեցին տարբեր միջոցառումներ, մամլո ասուլիսներ, կլոր սեղաններ, սեմինարներ, ցուցահանդեսներ եւ այլն:

ԿԱՐՄՐՈՒԿԸ ԹԲԻԼԻՍԻՑ ՓՈԽԱԴՐՎՈՒՄ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ

Հիվանդությունների վերահսկողության եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գամկրելիձեի հայտարարության համաձայն, եթե կարմրուկը փետրվարին հիմնականում կենտրոնացված էր Թբիլիսիում, ապա այժմ այն տարածվել է 42 շրջաններում: Այսօրվա դրությամբ, գրանցվել է վարակման 1716 դեպք, նրանցից 1202-ը՝ Թբիլիսիում:

Գամկրելիձեն ծնողներին կոչ է արել շտապ կարգով պատվաստումներ անել երեխաներին, եթե ժամանակին այդպիսիք չէին արվել:

«Կարմրուկի դեմ պայքարի միակ մեթոդը մինչեւ 7 տարեկան բոլոր երեխաների պատվաստումն է (վակցինացիա), եթե նրանք բաց են թողել գեթ մեկ պատվաստում: Պատվաստումներ արվում են նաեւ հիվանդների հետ կապի մեջ գտնվող բոլոր մեծահասակներին: Մարտ ամսից նրանց օգնում է նաեւ բուժանձնակազմը: Չնայած դրան, վարակման դեպքերն աճում են: Չեմ կարող ասել, որ դա տագնապալից դրություն է, քանի որ 2004-2005 թվականներին երկրում գրանցվել էր ավելի քան 8 հազար դեպք»,- նշել է Ամիրան Գամկրելիձեն:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԿՈԲԱ ԴԱՎԻԹԱՇՎԻԼԻՆ ԸՆԴԴԵՄ ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵՅԵՆԿՈՅԻ

Վրաստանի խորհրդարանի մեծամասնության անդամ Կոբա Դավիթաշվիլին Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեյենկոյին հրապարակավ մեղադրեց անազնվության մեջ:

Տեղի ունեցածի կապակցությամբ Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին Ստրասբուրգից հեռախոսով կապվել է պատգամավորի հետ: «Ես զանգեցի Դավիթաշվիլուն եւ նկատողություն արեցի: Նա պետք է իմանա, որ բոլոր հարցերը նախ լուծվելու են թիմի ներսում: Նա միշտ փորձում է դրսից տեղեկատվություն ներբերել, որն ոչ մի հիմնավորում չունի: Նրան պարզաբանեցի, եթե ցանկանում է մնալ թիմում, ապա պետք է հաշվի նստի նրա հետ եւ ստացված տեղեկատվությունը նախ՝ ներկայացնի թիմին: Ամեն ինչում պետք է գործեն տարրական կանոնները: Սերգեյենկոն ազնիվ մարդ է, բնականաբար թեման մտացածին է եւ նրա գործունեությունում ոչ մի կոռուպցիա չկա»,-լրագրողներին հայտարարեց Իվանիշվիլին:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Մունիցիպալիտետի վարչական սահմաններում գտնվող գյուղերը կստանան հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ:

Գյուղերը կունենան գույք ունենալու, համաձայնագրեր ձեւակերպելու, եկամուտ ստանալու, դատարանում որպես պատասխանատու կամ հայցվոր ելույթ ունենալու իրավունք:

Խորհրդարան է ներկայացվել «Գյուղերի հասարակական ինքնավարությունների մասին» օրինագիծը, որը պատրաստել են մեծամասնության անդամները:

Նախագծի համապատասխան, ինքնավարության միավորը վերոնշյալ իրավունքներն ստանում է արդարադատության նախարարությունում գրանցվելու պահից: Սույն կարգավիճակը կշնորհվի մունիցիպալիտետի վարչական սահմաններում գտնվող բոլոր գյուղերին, որտեղ գրանցված է քվեարկության իրավունք ունեցող թեկուզ մի քաղաքացի:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ԳԻՆՈՒ ԵՎ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐՎԵՑ

Գինի եւ հանքային ջրեր արտադրող 7 վրացական ձեռնարկություններ բարեհաջող ավարտել են ՌԴ-ում գրանցվելու գործընթացը, ինչը նախապայման է ապրանքը հետագայում ռուսական շուկա ներկրելու համար, հայտարարել է Վրաստանի Գյուղատնտեսության նախարար Դավիթ Կիրվալիձեն:

Ավելի վաղ Ազգային գործակալության ղեկավար Լեւան Դավիթաշվիլին հայտարարել էր, որ գրանցման գործընթացը անցել են «Քինձմարաուլիս մարանի», «Դուգլաձեի գինետուն» եւ «Ալավերդի» ընկերությունները: Բացի այդ, իր ապրանքը ներկրելու իրավունք էր ստացել «Բորժոմին», հայտարարել էր IDS Borjomi Georgia ընկերության աշխատակիցը:

«Ռուս մասնագետների կողմից իրականացված երկու ստուգումների արդյունքում դրական արձագանք են ստացել գինի արտադրող 65 եւ հանքային ջրի 4 ընկերությունները, ինչի արդյունքում նրանք հնարավորություն են ստացել իրենց ապրանքը գրանցել ՌԴ-ում: Այսօրվա դրությամբ, 7 վրացական ընկերություններ արդեն ավարտել են գրանցման գործընթացը»,- լրագրողներին հայտնել է Կիրվալիձեն:

Ըստ նրա՝ նաեւ բարեհաջող արդյունք է գրանցել Ռուսաստան վրացական գյուղատնտեսական ապրանքներ ներկրելու համար Մոսկվա մեկնած պատվիրակությունը:



ԿԱԶՄԿՈՄԻՏԵՆ ԿԳԼԽԱՎՈՐԻ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին Մայիսի 26-ի անկախության օրվա տոնակատարության կազմկոմիտեի նախագահ է նշանակել կրթության նախարար, փոխվարչապետ Գիորգի Մարգվելաշվիլուն:

Կոմիտեի կազմում ընդգրկված են արտգործնախարար Մայա Փանջիկիձեն, պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, սպորտի նախարար Լեւան Դիփիանին, ՆԳ նախարար Իրակլի Ղարիբաշվիլին, տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարար Դավիթ Նարմանիան, ֆինանսների առաջին փոխնախարար Գիորգի Թաբուկաշվիլին, մշակույթի փոխնախարար Մանանա Բերիկաշվիլին եւ ուրիշներ:

Կազմկոմիտեում աշխատելու առաջարկություն է արվել Սամթավիսիի եւ Գորիի միտրոպոլիտ սրբազան Անձիա Գվազավային, խորհրդարանի փոխխոսնակներ Մանանա Կոբախիձեին եւ Զվիադ Չիձիգուրուն:

ԱՆԴՐՈ ԲԱՌՆՈՎԸ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐ

Շիդա Քարթլիի տարածաշրջանի նահանգապետ Անդրո Բառնովը նշանակվել է Վրաստանի նախագահի վարչակազմի ղեկավար: Այդ պաշտոնում նա կփոխարինի Դավիթ Տղեշելաշվիլուն, որը մեկնում է ուսման ԱՄՆ: Նա նախագահի վարչակազմի ղեկավար էր 2010 թվականից:

Անդրո Բառնովը անցյալում հայտնի քաղաքաբան էր, 2010 թվականից զբաղեցնում էր Վրաստանի ռազմական ակադեմիայի ռեկտորի պաշտոնը, իսկ հետո եղավ պաշտպանության փոխնախարար:

Առայժմ հայտնի չէ, թե ով կզբաղեցնի Շիդա Քարթլիի նահանգապետի պաշտոնը:

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ ԿՆՎԱԶԵՑՎԻ

Այս տարի Վրաստանը իր արտաքին պարտքի մարման հաշվին կվճարի 200 միլիոն դոլար: Վրաստանը պարտքի գծով վճարումները կսկսի այս տարվա մայիսից: «Պետական բյուջեում գոյություն ունի համապատասխան պահուստ, եւ մենք որոշեցինք այն նպատակամղել պարտքերի վճարմանը»,- ասել է նախարարը:

Խադուրին հաղորդել է, որ պետությունը կվճարի եվրոպարտատոմսերի գծով ունեցած պարքը, որ կազմում է 40 միլիոն դոլար, ինչպես նաեւ կմարի Արտարժույթի միջազգային հիմնադրամի հանդեպ ունեցած պարտքը:

Վրաստանի ազգային բանկի տվյալներով, 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ երկրի ընդհանուր պարտքը կազմում է 13,4 միլիարդ դոլար:

ԿԸՀ-Ի ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պահանջում է միջխմբակցային խմբի նիստում քննարկել խորհրդարան ներկայացված օրենսդրական նախաձեռնությունը: Նախաձեռնության համաձայն, ինքնավարության մարմինների միջակա ընտրությունները պետք է անցկացվեն հունվարին, ապրիլին, հուլիսին եւ հոկտեմբերին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ներկայացրած խմբագրությամբ օրենքի ընդունմամբ կծագեն մի շարք բարդություններ:

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԵՐԿՐՈՒՄ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀԻՐԱՎԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ինստիտուտ եք, որը Եվրոպայում աջակցում ու պաշտպանում է ժողովրդավարությունը: Դուք ավելի քան ուրիշները գիտեք, որ ժողովրդավարությունը կառուցվում է ոչ թե խոսակցություններով, այլ կոնստրուկտիվ համագործակցությամբ եւ վիթխարի ջանքերով: Դիմում եմ ձեզ, քանզի համոզված եմ, որ դուք եվրոպական ժողովրդավարության լավագույն ճարտարապետերն եք»,- ֆրանսերեն հայտարարեց վարչապետը, ապա՝ ելույթը շարունակեց վրացերենով:

ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎՐԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՎԵԼՆ Է

Եվրախորհրդարանի խորհրդարանական ասամբլեայում Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին իր ելույթում եվրապատգամավորներին վստահեցրեց, որ Վրաստանը կաջացկի ԵԽԽԱ-ի՝ տարածաշրջանում գործադրվող խաղաղ ջանքերին: «Մենք ապրում ենք բարդ տարածաշրջանում: Հարեւան մեծ երկրի հավակնությունների արդյունքում մենք զրկվել ենք մեր տարածքի 20 տոկոսից, որը Ռուսաստանը բռնազավթել է: Մենք հիանալի գիտենք խաղաղության գինը, ուստիեւ մտադիր չենք թափահարել զենքերով ու հիմնախնդիրները կլուծենք բանակցությունների միջոցով»,- հայտարարեց վարչապետը: Խոսելով Ռուսաստանի հետ առնչվելու ուղղությամբ իրականացվող քայլերի մասին, վարչապետը նշեց, որ դա չի նշանակում, որ Վրաստանը հրաժարվում է Արեւմուտքի միջոցներից. «Պնեւի ձեւաչափը միակն է, որով ռուս դիվանագետների հետ քաղաքական հարցերը քննարկվում են եւ մենք մտադիր ենք շարունակել այդ բանակցությունները՝ մեր գործընկերների մասնակցությամբ»:

Վրաստանի վարչապետի խոսքերով, Վրաստանը Ռուսաստանի նկատմամբ վարում է կոռեկտ քաղաքականություն եւ համապատասխան արձագանք է ակնկալում: Նա հիշեցրեց, որ Վրաստանն ստանձնել է տարածաշրջանում խաղաղությունը պահպանելու պարտավորություն, եւ նա կկատարի այդ գործառույթը:

Բիձինա Իվանիշվիլին ընդգծեց նաեւ, որ Վրաստանի ժողովուրդը արդեն վաղուց է սահմանել ՆԱՏՕ-ին եւ Եվրամիությանն անդամակցվելու իր նպատակը եւ Վրաստանի կառավարությունը կշարունակի ընթանալ այդ ուղիով: «Այդ որոշումը ոչ թե քաղաքական մի խմբի, այլ ողջ ժողովրդի որոշումն է, ուստի մենք կշարժվենք այդ ուղղությամբ»,- ընդգծեց վարչապետը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄՆ ԱՐԱԳԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների նկատմամբ ճնշումներ չեն գործադրվում: Այդ մասին Եվրախորհրդարանի խորհրդարանական ասամբլեայում հայտարարեց Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին: Նա նշեց, որ վրացական պետությունը հնարավոր ամեն ինչ անում է վրացական հասարակությանը ազգային փոքրամասնությունների ինտեգրման գործընթացի արագացման համար. «Հիմնախնդիրը ազգային փոքրամասնությունների կողմից պետական լեզվի չիմացությունն է եւ, կարծում եմ, որ նոր իշխանության պայմաններում մենք լրացուցիչ միջոցառումներ կիրականացնենք ազգային փոքրամասնությունների կողմից պետական լեզվի ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար, ինչը նրանց թույլ կտա ընդգրկվել մեր հասարակությունում»,- հայտարարեց վարչապետը:

Բիձինա Իվանիշվիլին նշեց, որ Վրաստանն ստանձնել է տարածաշրջանային լեզուների վավերացման պարտավորությունը եւ ժամանակին դա անվերապահորեն կիրականացնի:

ԱԲԽԱԶԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԳՈՐԾԱՐԿՎԻ

Խոսելով Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնման հարցի մասին, վարչապետը ԵԽԽ ասամբլեայում հայտարարեց, որ դա կիրականացվի միայն խաղաղ ուղիներով: Ինչ վերաբերում է ԵԽԽԱ-ի ամբիոնի տրամադրմանը Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի անջատողականներին, ապա, ինչպես հայտարարեց վարչապետը, ինքը դրա դեմ է: «Այդ երկրամասերը Վրաստանի հատվածներն են, եւ նրանք ԵԽԽԱ-ի ամբիոնից կարող են օգտվել որպես Վրաստանի պատվիրակության անդամներ: Դրանում ոչ մի հիմնախնդիր չեմ տեսնում»,- ընդգծեց վարչապետը:

Անդրադառնալով աբխազական երկաթուղու վերագործարկման հարցին, Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ այն անպայմանորեն կվերագործարկվի, թեպետ դրա համար անհրաժեշտ է ժամանակ եւ համբերություն:

ՋԱՆՔԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ՏԱՐԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շարունակելով հաղորդակցությունների թեման, Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին ԵԽԽ ասամբլեայի իր ելույթում նշեց, որ Վրանստանի բոլոր ջանքերը գործադրում է Կասպիի տարածաշրջանից ու Ասիայից Եվրոպա էներգատարների տարանցիկ երկրի դերի ուժեղացման համար: Նրա խոսքերով, այդ կապակցությամբ Վրաստանը մտադիր է ընդլայնել հարաբերությունները հարեւան երկրների հետ: «Էներգաանվտանգությունը ցանկացած երկրի համար կարեւորագույն ոլորտն է, եւ այդ նախագծերը մեզ թույլ են տալիս ապահովել այդ անվտանգությունը»,- հայտարարեց վարչապետը:

ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՆԱԽՈՐԴ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՍԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Եվրախորհրդարանի խորհրդարանական ասամբլեայի իր ելույթում Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին եվրախորհրդարանականներին վստահեցրեց, որ «նոր իշխանությունը կշարունակի նախորդ կառավարության սկսած օգտավետ բարեփոխումները»:

«Մենք կշարունակենք բարեփոխումների այն փոքր մասը, որը սկսվել էր նախորդ իշխանության կառավարման սկզբում եւ, որը օգտավետ էր երկրի համար: Սակայն պարտավոր ենք վերջին տարիներին ձեւավորված ավտորիտար կառույցները վերածել ժողովրդավարական ինստիտուտների: Երկրում արմատավորված վերնախավային կոռուպցիան գործարարությանը զարգացման հնարավորություն չէր տալիս, ոտնահարվում էին մարդու իրավունքները: Մենք սկսել ենք արդարության վերականգնման գործընթացը»,- հայտարարեց վարչապետը:

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 98

ԱՌԱՆՑ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կայսրությունում, հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունն է: Դրա մասշտաբները գիտակցելու համար բավական է հիշել, որ 1894 թվականից մինչեւ 1918 թվականը ներառյալ ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում զոհվել է շուրջ մեկուկես միլիոն հայ: Եթե հաշվի առնենք, որ այդ պահին ամբողջ աշխարհում ապրում էր ոչ ավելի, քան 3,5-4 միլիոն հայ եւ նրանցից 2 միլիոնը՝ Օսմանյան կայսրությունում, հեշտ է պատկերացնել, թե այդ իրադարձությունները ինչպիսի հարված եղան հայ ազգին: Ցավոք, այդ հանցագործությունը պատշաճ գնահատական չի ստացել համաշխարհային համագործակցության կողմից, ինչը եւ հետագայում հանգեցրեց Հոլոքոստին, եւ համակենտրոնացման ճամբարների, ուր հիտլերականները ոչնչացրին 7 միլիոն հրեաների, հանգեցրեց մարդկության դեմ նացիստական բռնության այլ մեծաթիվ գործողությունների...

- Ի՞նչը նախորդեց ցեղասպանությանը: Չէ՞ որ անցյալում հայերը հանգիստ ապրում էին Թուրքիայի տարածքում եւ նույնիսկ ինտեգրված էին թուրքական հասարակայնությանը: Հայտնի է, օրինակ, որ Օսմանյան կայսրության շատ նախարարներ ունեցել են հայկական ծագում:

- Նախ, հայերն ապրում էին ոչ թե Թուրքիայի տարաքում, այլ իրենց պատմական հայրենիքում, որն այժմ հայտնի է Արեւմտյան Հայաստան անվամբ: Սկսած հնագույն ժամանակներից, այդ հողերում գոյություն են ունեցել հայկական պետություններ, որոնք XI դարում անկում ապրեցին թուրք-սելջուկների հարվածներից: Այն բանից հետո, երբ XIII դարում թուրք-սելջուկների կայսրությունը փլուզվեց, նրա ավերակների վրա ստեղծվեց Օսմանյան կայսրությունը, որն, իր հերթին, XIX դարի սկզբին անկման հասավ: Բնական է, որ կայսրության կազմում բռնի ներգրավված ժողովուրդներն սկսեցին պայքարել իրենց անկախության համար: 1825 թվականին անկախություն ձեռք բերեց Հունաստանը, 1829-ին՝ Սերբիան, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում՝ Բուլղարիան: Երկյուղելով, որ հայերը, Բալկանյան քրիստոնյաների հաջողություններով ոգեւորված, նույնպես պայքարի կբարձրանան հանուն անկախության, սուլթան Աբդուլ Համիդը XIX դարի վերջին սկսեց նպատակամղված կերպով անցկացնել հայ բնակչության ոչնչացման եւ բռնի ասիմիլյացիայի քաղաքականություն: Փակվեցին հայկական դպրոցներն ու թերթերը: Հայկական գյուղացիությունը սնանկացավ: Հայ բնակչության դեմ հաշվեհարդար տեսնելու համար սուլթանն ստեղծեց հատուկ հեծելազորային ջոկատներ, որոնց հիմնական խնդիրը եղավ «հայերի ճնշումը»: Սկսած 1891 թվականից, այդ ջոկատները հարձակումներ էին գործում հայ բնակչության վրա: Առավել դաժան ու արյունոտ եղավ սպանդը Ուրֆա քաղաքում, որտեղ ամբողջությամբ կոտորվեց ութ հազարանոց հայ բնակչությունը, եւ որը կազմում էր քաղաքի բնակիչների երրորդ մասը: 1896 թվականի օգոստոսին տեղի ունեցավ կոտորած Ստամբուլում, եւ արդյունքում՝ զոհվեց մինչեւ 6 հազար հայ: Հրահրելով արյունահեղություն՝ թուրքական իշխանությունները մզկիթներում մուսուլմանների համար բարձրաձայնում էին սուլթանի ուղերձները: Դրանցում հայտարարվում էր, որ հայերը սկսել են ապստամբություն կայսրության դեմ, եւ առաջարկվում էր իսլամը պաշտպանել անհավատներից: Ընդ որում, որպես խրախուսանք, նշում էին, որ խռովարարների գույքի տիրապետումը մուսուլմանների կողմից չի հակասում ղուրանին:

- Բայց չէ՞ որ ընդունված է եղեռնի կազմակերպիչներ համարել «երիտթուրքերին»:

- 1908 թվականին Թուրքիայում տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Իշխանությունը զավթեցին երիտասարդ թուրք սպաներ ու չինովնիկներ, ովքեր հայտնի են «երիտթուրքեր» անվամբ: Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը հեռացվեց իշխանությունից, հայերն ուրախությամբ ընդունեցին «երիտթուրքերին»՝ հուսալով, որ վերջ կդրվի բոլոր դժբախտություններին ու ճնշմանը: Սակայն, «երիտթուրքերի» կառավարման արդեն իսկ առաջին տարիները ցույց տվեցին, որ այդ ակնկալումներն անտեղի են: Դրա առաջին էական վկայությունն եղավ 1909 թվականի կոտորածը Կիլիկիայում, երբ զոհվեց շուրջ 30 հազար հայ: Դրան հետեւեցին ողջ Թուրքական կայսրությունում 1909-1910 թվականներին ծավալված ազգային փոքրամասնությունների՝ հույների, բուլղարների, ալբանացիների, ասորիների եւ այլոց ջարդերը: Չնայած, հայերը փորձում էին շարունակել համագործակցությունը երիտթուրքերի հետ: Սակայն, 1912 թվականին սկսված Բալկանյան պատերազմները, երբ թուրքական լծից ազատագրված Հունաստանը, Սերբիան եւ Բուլղարիան պատերազմ սկսեցին նախկին գերիշխողի դեմ: Ահա այդ պատերազմները նորից սրեցին թուրքերի եւ հայերի հարաբերությունները: Թուրքիայի կառավարությունը, որտեղ 1913 թվականի հեղաշրջման արդյունքում իշխանությունը կենտրոնացել էր երեք «երիտթուրքերի»՝ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի, ռազմական նախարար Էնվեր փաշայի եւ ծովային նավատորմի նախարար Ջեմալ փաշայի ձեռքին, մտածում էր Մեծ Թուրան ստեղծելու մասին, որը պետք է իրենում ներառեր վիթխարի տարածք, այդ թվում՝ ամբողջ Կովկասը: Այլ կերպ ասած, Օսմանյան կայսրությունում ապրող բոլոր ոչ մուսուլմանները, առաջին հերթին, հայերը, պետք է կամ թուրքանային կամ ոչնչացվեին:

- Խնդրում եմ հակիրճ պատմել, թե ի՞նչ տեղի ունեցավ 1915 թվականին, եւ ինչո՞ւ հենց այդ տարվանից է սկսվում այդ արյունալի ողբերգության տարեգրությունը:

- 1914 թվականի հոկտեմբերի 29-ին Թուրքիան ներգրավվեց Առաջին համաշխարհային պատերազմի մեջ: Սակայն դեռեւս օգոստոսին, պատերազմի համար միջոցներ հավաքելու պատրվակով, սկսվեցին հայ բնակչության կողոպուտներ Անատոլիայում: Դրանց զուգահեռ, թուրքական իշխանություններն սկսեցին հայերի զինաթափման արշավ, ընդ որում՝ նրանցից խլում էին նույնիսկ խոհանոցային դանակները:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)